ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/38

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի,
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցում, ախտահանիչ նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/760-2020 գրությամբ «Խաչպար»

ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.01.2020թ.-ի թիվ ՊՆ/02/139-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/25 համարի ծածկագիրը և 05.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/25 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/38 համարի ծածկագիրը:

19.02.2020թ.-ին, 28.02.2020թ.-ին և 05.03.2020թ.-ին նշանակվել և կայացվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 05.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.01.2020թ.-ի թիվ ՊՆ/02/139-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «Ախտահանիչ նյութերի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 7 մասնակիցներ, այդ թվում՝ «Խաչպար» ՍՊԸ-ն:

«Խաչպար» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 11.12.2019թ. սահմանված կարգով համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցը սահմանված ժամկետում չներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 18.12.2019թ. կայացած նիստում որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկեց ներկայացնել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում ներկայացվեց պահանջված փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց անհամապատասխանությունները (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում):

Քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված շտկելու հնարավորությունից արդեն իսկ օգտվել էր (սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթեր չէր ներկայացրել և նրան որպես շտկում հնարավորություն էր տրվել ներկայացնելու այդ փաստաթղթերը), իսկ օրենսդրությամբ կրկնակի շտկում կատարելու հնարավորություն նախատեսված չէ, ուստի հիմքը ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացված

փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը միաժամանակ, մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:»:

Ելնելով վերոգրյալից՝ կից ներկայացրել են «Խաչպար» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված լրացմամբ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև հետևյալը.

«ՍՑ-ԼՕ-2020/38 ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ս.թ. փետրվարի 27-ին ներկայացված նյութերի առնչությամբ տեղեկացնում եմ, որ մեր կարծիքով նշված նյութերը որևէ էական նշանակություն չունեն սույն ընթացակարգի քննության հետ, քանի որ ընկերությունն ինքն է ընտրում «Google» կորպորացիայի «gmail.com» տիրույթում գտնվող իր էլեկտրոնային փոստարկղից նամակները և հաղորդագրությունները ստանալու եղանակը (կոնկրետ այս դեպքում «Խաչպար» ՍՊ ընկերությունն ընտրել է «outlook» ծրագիրը): Մուտքանունի և գաղտնաբառի միջոցով հնարավոր բազմաթիվ եղանակներից ընդամենը մեկի խափանումը չի կարող նշանակել, որ ընկերությունը զրկված է եղել իր էլեկտրոնային փոստի հաղորդագրություններին ծանուցվելու հնարավորությունից: Այսինքն, ընկերությունը կարող էր ուղղակի մուտք գործել «gmail.com» տիրույթ և ստուգել իր էլեկտրոնային փոստը, կամ օգտվել էլեկտրոնային փոստի հաղորդագրությունների ծանուցումների այլ ձևերից (թեկուզ նաև ընկերության համակարգչային ցանցից դուրս այլ համակարգիչների կամ «սմարթֆոն» տիպի հեռախոսների միջոցով): Փաստացի «Խաչպար» ՍՊ ընկերությունը նշված ժամանակահատվածում պարզապես չի ստուգել իրեն հասցեագրված էլեկտրոնային փոստարկղը, այլ միայն հետևել է «outlook» ծրագրի ծանուցումներին, և բնական է, որ նշված ծրագրի խափանման պատճառով ծանուցում չի ստացել: Միաժամանակ կարևոր ենք համարում այն փաստը, որ տեխնիկական խնդիրները եղել են հենց ընկերության համակարգչային ցանցում և դրա պատասխանատուն հենց «Խաչպար» ընկերությունն է և ոչ այլ ոք:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ «Խաչպար» ՍՊ ընկերությունը փաստացի զրկված չի եղել ծանուցում ստանալու և ժամանակին դրան պատասխանելու հնարավորությունից, այլ պարզապես չի օգտվել այդ հնարավորությունից:

Բացի դա. «Խաչպար» ՍՊ ընկերության տնօրենը նախկին նիստի ժամանակ հայտարարեց, որ նույնիսկ ներկայացված տեխնիկական բնութագրում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն ունենալու դեպքում էլ չէր պատրաստվում դրանք շտկել:»:

3. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Խաչպար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/760-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«<<Խաչպար>> ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի հայտ էր ներկայացրել Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով (կից փաստաթուղթ թիվ 1):

28.11.2019թ. կայացած նիստում <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը իր թիվ 5-րդ արձանագրությունում փաստել է, որ էլեկտրոնային գնահատման արդյունքներից ելնելով, որոշում է կայացվել ընթացակարգի չափաբաժինների մասերով 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչելու մասին, համաձայն որի՝ Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<Խաչպար>> ՍՊԸ-ն (կից փաստաթուղթ թիվ 2, էջ 1 և էջ 2, կետ 3.1):

Քանի որ այս մրցույթի ընթացակարգը իրականացվում էր ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել 28.11.2019թ. կայացած նիստը և գների նվազեցման նպատակով 05.12.2019թ. կազմակերպել միաժամանակյա մանակցություններ բոլոր մասնակիցների հետ (կից փաստաթուղթ թիվ 2, էջ 3, կետ 3.3, 1-ին պարբերությունը):

05.12.2019թ. ՀՀ ՊՆ-ում կայացած բանակցություններում մասնակիցները նվազեցրել են իրենց առաջարկած գները Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով, որոնց արդյունքում ամենացածր գինը առաջարկվել է էլի <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից (կից փաստաթուղթ թիվ 2, էջ 3, կետ 3.3, 3-6-րդ պարբերություններում արված նշումները)

10.12.2019թ. <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին զբաղեցնող մասնակիցների մասին (կից փաստաթուղթ թիվ 2, էջ 3, կետ 4.1) և կազմել է ընթացակարգի գների ամփոփիչ թիվ 1 Հավելվածը (կից փաստաթուղթ թիվ 2 էջ՝ 4):

11.12.2019թ. <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը ծանուցում է առաքել <<Խաչպար>> ՍՊԸ-ին (կից փաստաթուղթ թիվ 3), որը սակայն <<Խաչպար>> ՍՊԸ-ն չի ստացել, քանի որ 2019թ. դեկտեմբերի 10-ից մինչև 16-ը ընկած ժամանակահատվածում <<Խաչպար>> ՍՊԸ-ի համակարգչային ցանցում եղել են տեխնիկական անսարքություններ, որոնց հետևանքով ոչ միայն ժամանակին չեն ստացվել, այլ նաև ժամանակին չեն առաքվել <<Խաչպար>> ՍՊԸ-ի էլեկտրոնային գրագրությունները (կից փաստաթուղթ թիվ 4 էջեր՝ 1-5):

18.12.2019թ. <<Խաչպար>> ՍՊԸ-ն ստացել է <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 2-րդ ծանուցումը (կից փաստաթուղթ թիվ 5), որին ի պատասխան 19.12.2019թ. ներկայացրել է <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով ընթացակարգի Հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1-2):

14.01.2020թ. կայացած նիստում <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը իր թիվ 7-րդ արձանագրության թիվ 1.2 կետով անհամապատասխանություններ է արձանագրել <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված Հավելված 3.1-ում առկա տվյալներում, և որոշում է կայացրել՝ <<.... <<Խաչպար>> ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:...>> (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-2, կետ 1.2):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն համաձայն չէ այդ որոշման հետ հետևյալ հիմնավորումներով՝

1) Պատվիրատուի կողմից անհամապատասխանությունների թվարկումը թիվ 9-րդ չափաբաժնի մասով գրված է՝ <<.... փաթեթավորումը՝ գործարանային տուփ և պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50

%....>> տեսքով (կից փաստաթուղթ թիվ 7, էջ՝ 2, արված նշումները), որի 1-ին հատվածում բացակայում է <<....500g....>> թիվը, որն առկա է ինչպես Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելվածի թիվ 9-րդ չափաբաժնի <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակում (կից փաստաթուղթ թիվ 8, արված նշումները), այնպես էլ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված Հավելված 3.1-ում՝ <<....գրանուլներ, 500 գ...>> (կից փաստաթուղթ թիվ 6, էջ՝ 2, արված նշումները):

Դա նշանակում է, որ Պատվիրատուի թվարկած անհապատասխանություններից թիվ 9-րդ չափաբաժնի մասով մնում է միայն <<.... պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> անհամապատասխանությունը, որն ամբողջությամբ նույնն է, ինչ որ ներկայացված է նաև թիվ 2-րդ չափաբաժնի մասով (կից փաստաթուղթ թիվ 8, արված նշումները), այսինքն՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով միևնույն՝ <<.... պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> արտահայտությունների բացակայությունների հիմքով՝ <<....գնահատող հանձնաժողովը որոշեց <<Խաչպար>> ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:... >> (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 2, կետ 1.2, վերջին պարբերությունը):

2) Համաձայն Պատվիրատուի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետի սահմանումների՝ << Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի.>> (կից փաստաթուղթ թիվ 9, կետ 3.1):

3) Համաձայն Պատվիրատուի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի Հավելված թիվ 3-ի սահմանումների՝ <<....որպես....առաջին տեղ զբաղեցրած մասնակից, կից ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ անվանումը ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր): ...>> (կից

փաստաթուղթ թիվ 10), ինչը որ ամբողջությամբ կատարվել է <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից (կից փաստաթուղթ թիվ 6, էջ՝ 1):

4) Համաձայն Պատվիրատուի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի Հավելված թիվ 3.1-ի սահմանումների՝ <<... որպես ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8 ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, և տեխնիկական բնութագրերը:....>> (կից փաստաթուղթ թիվ 11), ինչը որ նույնպես ամբողջությամբ կատարվել է <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, ներկայացված Հավելված 3.1-ում առկա են պահանջվող բոլոր տվյալները (կից փաստաթուղթ թիվ 6, էջ՝ 2):

5) Համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն Կարգի 32-րդ կետի 1-ին մասի զ) ենթակետի սահմանումների՝ <<...1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

զ. ապրանքների գնման դեպքում .... առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),....>>:

6) <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում առկա են Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով և Կարգի 32-րդ կետով պահանջվող՝ առաջարկվող ապրանքների անվանումները, ապրանքային նշանները, արտադրողների անվանումները(ապրանքի ամբողջական նկարագիրը), իսկ տեխնիկական բնութագրերում առկա են առաջարկվող ապրանքների տեխնիկական հատկանիշները արտացոլող շատ ավելի տվյալներ, քան դրանք պահանջվում են Հրավերով (կից փաստաթուղթ թիվ 6, էջ 2 և թիվ 8՝ արված նշումները):

7) <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների <<տեխնիկական բնութագրերը>> սյունակներում բացակայում են միայն Պատվիրատուի Հրավերի <<տեխնիկական հատկանիշները>> սյունակներում գրված միևնույն՝ <<....պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>>

արտահայտությունները, որոնք ոչ մի առընչություն չունեն առաջարկվող ապրանքների համար Հրավերով և Կարգով պահանջվող <<ապրանքի անվանումը>>, <<ապրանքային նշանը>>, <<արտադրողի անվանումը>> (ապրանքի ամբողջական նկարագիրը) և <<տեխնիկական բնութագրերը>> սահմանումների հետ, ինչը փաստվում և հաստատվում է հենց Պատվիրատուի կողմից, քանի որ <<....պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> արտահայտությունները Պատվիրատուն որակել է ոչ թե որպես <<տեխնիկական հատկանիշներ>>, այլ դրանց որակել է որպես <<...դրույթ...>>-ներ (կից փաստաթուղթ թիվ 7, էջ 2, արված նշումները):

Պատվիրատուի կողմից պահանջվող <<...դրույթ...>>-ները վերաբերվում են մատակարարման պահին տվյալ ապրանքի պիտանելիության ժամկետի մնացորդին, և համարժեք են այն <<...դրույթ...>>-ներին, որոնք Պատվիրատուն ներառել է Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի ծանոթություններում (կից փաստաթուղթ թիվ 8, արված նշումները):

Ասվածը ապացուցելու նպատակով Ձեզ եմ ներկայացնում Պատվիրատուի կողմից ապրանքների ձեռքբերման համար՝ նույն 2019թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, հայտարարված այլ մրցույթների <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ>>-ները, որտեղ <<....պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> արտահայտություններին համարժեք <<...դրույթ...>>-ները ներառված են Հրավերների Հավելված թիվ 1-ի ծանոթություններում (կից փաստաթուղթ թիվ 12, էջեր՝ 1 - 2, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում առկա են Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով և ՀՀ Կառավարության 526-Ն որոշման Կարգի 32-րդ կետով պահանջվող բոլոր պարտադիր տվյալները՝ առաջարկվող ապրանքների անվանումները, ապրանքային նշանները, արտադրողների անվանումները (ապրանքի ամբողջական նկարագիրը), իսկ տեխնիկական բնութագրերում առկա են առաջարկվող ապրանքների տեխնիկական հատկանիշները արտացոլող շատ ավելի տվյալներ, քան դրանք պահանջվում են Հրավերով:

Այդտեղ բացակայում են միայն Պատվիրատուի Հրավերի <<տեխնիկական հատկանիշները>> սյունակներում գրված միևնույն՝ <<....պիտանելիության մնացորդային

ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> արտահայտությունները, որոնք համաձայն Պատվիրատուի՝ համարվում են <<...դրույթ...>>-ներ, որոնց ներառման պահանջներ չկան ոչ Հրավերում և ոչ էլ Կարգում, ինչը նշանակում է, որ այդ <<...դրույթ...>>-ները չներառելով 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում, <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ոչ Հրավերի և ոչ էլ Կարգի համապատասխան պահանջների խախտումներ, որոնք հիմք կհանդիսանային <<Խաչպար>> ՍՊԸ-ի հայտը մերժելու համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Խաչպար» ՍՊԸ-ն Բողոքներ քննողն անձին խնդրել է մերժել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով:

Մասնակիցը ներկայացրած լրացումներով հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն <<ՍՅ-ՆԳ-2020/25>> ընթացակարգը քննող անձ պարոն Գ. Ներսիսյանին 31.01.2020թ. <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից տրված բացատրությունների և ներկայացված փաստաթղթերի հայտնում եմ հետևյալը՝

1) Պատվիրատուն <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 3.1-ում Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժիններում <<....պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> արտահայտությունների բացակայությունը համարել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և այդ հիմքով մերժել է <<Խաչպար>> ՍՊԸ-ի հայտը, սակայն այդ արտահայտությունները որակել է ոչ թե առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր, այլ <<...դրույթ...>>-ներ, որոնց առկայության պահանջներ գոյություն չունեն ինչպես ՀՀ Կառավարության 526-Ն Կարգով հաստատված սահմանումներում, այնպես էլ Պատվիրատուի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով և այդ կետի Հավելվածներ թիվ 3 և թիվ 3.1-ով հաստատված սահմանումներում:

2) Պատվիրատուի կողմից որպես <<...դրույթ...>>-ներ որակված արտահայտությունները՝ համաձայն ՀՀ Կառավարության 2013թ. մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման սահմանումների, հանդիսանում են դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման ընդհանրական չափորոշիչներ (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1 - 3, արված նշումները), որոնք որպես ընդհանրական չափորոշիչներ կիրառվել են նաև ՀՀ ՊՆ-ի կողմից ինչպես դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթներում (Ի

լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները), այնպես էլ տարբեր տեսակի ապրանքների ձեռքբերման նպատակով 2015թ. մինչև 2019 թ. հայտարարված մրցույթներում (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-7, արված նշումները), այդ թվում նաև ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 2015թ. մինչև 2018 թ. հայտարարված մրցույթներում (Ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1-7, արված նշումները), որտեղ այդ ընդհանրական չափորոշիչները ներառված են ոչ թե պահանջվող յուրաքանչյուր ապրանքի տեխնիկական բնութագրերում, այլ Հրավերով պահանջվող բոլոր ապրանքներին վերաբերվող <<Ծանոթություն>> ընդհանրական պահանջների ցանկում:

Վերոգրյալ փաստերն ու ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ կերպով ապացուցում և հաստատում են, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում Հրավերի թիվ 2-րդ և 9-րդ չափաբաժիններում բացակայող <<....պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50 %....>> արտահայտությունները չեն հանդիսանում պահանջվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնող՝ ՀՀ Կառավարության 526-Ն Կարգով հաստատված սահմանված, այնպես էլ Պատվիրատուի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8>> ծածկագրով մրցույթի Հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով և այդ կետի Հավելվածներ թիվ 3 և թիվ 3.1-ով սահմանված պահանջներ, չեն հանդիսանում նաև <<...դրույթ...>>-ներ՝ ինչպես որակվել են Պտվիրատուի կողմից, այլ դրանք հանդիսանում են տեխնիկական բնութագրերի կազմման ընդհանրական չափորոշիչներ, որոնց չներառելով 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում, <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ոչ Հրավերի և ոչ էլ Կարգի համապատասխան պահանջների խախտումներ, որոնք հիմք կհանդիսանային <<Խաչպար>> ՍՊԸ-ի հայտը մերժելու համար:»:

«Ի պատասխան Ձեր հարցումների լրացուցիչ Ձեզ եմ փոխանցում <<Խաչպար>> ՍՊԸ-ի և <<Նորայր Մարտիրոսյան>> ԱՁ-ի միջև 2019թ. նոյեմբերի 1-ին կնքված՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համակարգչային ցանցի անխափան աշխատանքները ապահովող, պայմանագիրը և <<Նորայր Մարտիրոսյան>> ԱՁ-ի պետռեգիստրի պատճենը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2013թ. մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշումը, որով ՀՀ պետբյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի պիտանելիության ժամկետները՝ գնորդին հանձնելու պահին, սահմանվում են ոչ թե որպես պահանջվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնող պահանջներ, և ոչ էլ <<...դրույթ...>>-ներ՝ ինչպես որակվել են Պտվիրատուի

կողմից, այլ դրանք հանդիսանում են տեխնիկական բնութագրերի կազմման ընդհանրական չափորոշիչներ, որոնց չներառելով 19.12.2019թ. Պատվիրատուին ներկայացված Հավելված 3.1-ում, <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ոչ Հրավերի և ոչ էլ Կարգի համապատասխան պահանջների խախտումներ, որոնք հիմք կհանդիսանային <<Խաչպար>> ՍՊԸ-ի հայտը մերժելու համար:»:

«Ի լրումն 19.02.2020թ. տրված բացատրությունների և ի պատասխան Ձեր հարցումների լրացուցիչ տեղեկացնում եմ որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համակարգչային ցանցում 2019թ. դեկտեմբերի 10-ից 16-ը ընկած ժամանակահատվածում եղել են տեխնիկական անսարքություններ, որոնց հետևանքով խափանվել են էլեկտրոնային փոստի բնականոն աշխատանքները՝ ժամանակին չեն ստացվել և չեն առաքվել <<Խաչպար>> ՍՊԸ-ի էլեկտրոնային գրագրությունները, որոնք մեր կողմից հայտնաբերվել և վերացվել են 2019թ. դեկտեմբերի 17-ին:

Որպես վերոգրյալների հաստատումներ Ձեզ ենք ներկայացնում 2019թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ ՖՆ-ին, դեկտեմբերի 10-ից 16-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին առաքված՝ թվով 5, բողոքների էլեկտրոնային ստացականները (ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-6), որոնք ՀՀ ՖՆ-ի էլեկտրոնային քարտուղարության կողմից մուտքագրվել են 2019թ. դեկտեմբերի 19-ին (ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-2), <<Խաչպար>> ՍՊԸ-ի համակարգչային ցանցը սպասարկող <<Նորայր Մարտիրոսյան>> Ա/ձ-ի կողմից 2019թ. դեկտեմբերի 17-ին կատարված աշխատանքների մասին տեղեկատվությունը (ի լրումն՝ կից փաստաթուղթ թիվ 3):»:

4. <u>ՍՑ-LO-2020/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 24.10.2019թ.-ին ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.11.2019թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն հանձնաժողովի կողմից 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի khachpar.llc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2019թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին բացառությամբ «Խաչպար» ՍՊԸ-ի: Վերջինս 11.12.2019թ.-ին ծանուցվել էր ներկայացնելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, սակայն օրենքով սահմանված ժամկետում մասնակցի կողմից չներկայացվեցին սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Խաչպար» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի khachpar.llc@gmail.com

էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 14.01.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հաշվի առանելով այն հանգամանքը, որ հայտերի գնահատման արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն հանձնաժողովի կողմից 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որին 11.12.2019թ.-ին armeps համակարգի միջոցով ծանուցվել էր ներկայացնելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որը սակայն օրենքով սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ն չներկայացրեց և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 18.12.2019թ.-ի ծանուցմաբ պահանջվեց ներկայացնել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները.

-«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1) 2-րդ չափուսբաժնով նախատեսված «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել էր, որ նշված ապրանքատեսակը պետք է ունենա «Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%», որի վերաբերյալ դրույթը բացակայում էր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

9-րդ չափարաժին՝ «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ գրանուլաներ» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել էր փաթեթավորումը՝ գործարանային տուփ և պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%,

որի վերաբերյալ դրույթը բացակայում էր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

Քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված շտկելու հնարավորությունից արդեն իսկ օգտվել էր (սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթեր չէր ներկայացրել և նրան որպես շտկում հնարավորություն էր տրվել ներկայացնելու այդ փաստաթղթերը), իսկ օրենսդրությամբ կրկնակի շտկում կատարելու հնարավորություն նախատեսված չէ, ուստի հիմքը ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

«Խաչպար» ՍՊԸ-ի համակարգչային ցանցը սպասարկող «Նորայր Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից կազմված արձանագրության համաձայն՝ 2019թ. դեկտեմբերի 17-ին «Խաչպւսր» ՍՊԸ-ի գրասենյակում տեղակայված համակարգչային ցանցում հայտնաբերվել են խաթարումներ, որոնց հետևանքով խզվել է կապը google-ի սերվերի համակարգչի և «outlook» համակարգի միջև: Այդ խաթարումների արդյունքում «Խաչպւսր» ՍՊԸ-ի կողմից ուղարկված գրությունների մասով «outlook» համակարգը ցույց է տվել, որ ուղարկվել է գրությունը, սակայն այն չի փոխանցվել կենտրոնական սերվերին, որի հետևանքով հասցեատերերը չեն ստացել գրությունները:

Google-ի սերվերը այլ կազմակերպությունների կողմից «Խաչպւսր» ՍՊԸ-ին ուղարկված գրությունների հասցեատերերին հաղորդագրություններ է ներկայացրել ուղարկված գրությունների ստացման մասին, սակայն այդ գրությունները չի կարողացել փոխանցել «outlook» համակարգին, հետևաբար «Խւսչպար» ՍՊԸ-ն չի ստացել նշված գրությունները:

Վերջինիս կողմից վերացվել են հայտնաբերված թերությունները և վերականգնվել են «Խաչպւսր» ՍՊԸ-ի գրասենյակում տեղակայված համակարգչային ցանցի բնականոն գործընթացները:

01.11.2019թ.-ին «Խաչպւսր» ՍՊԸ-ի և «Նորայր Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Նորայր Մարտիրոսյան» Ա/Ձ-ն պարտավորվում է ապահովել «Խաչպւսր» ՍՊԸ-ի համակարգիչների

և համակարգչային ցանցի անխափան աշխատանքը, խնդիրներ առաջանալու դեպքում՝ «Խաչպւսր» ՍՊԸ-ի կողմից տեղեկացվելուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում վերականգնել համակարգի բնականոն աշխատանքը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/760-2020 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը,

արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից

ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապա-տասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 24.10.2019թ.-ին ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/8» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Խաչպար» ՍՊԸ-ն հանձնաժողովի կողմից 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի khachpar.llc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա

ընթացքում ներկայացնել հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1:

Մասնակցի կողմից հավելված թիվ 3.1 չի ներկայացվել, որպիսի պայմաններում Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Խաչպար» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 18.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի khachpar.llc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 14.01.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հաշվի առանելով այն հանգամանքը, որ հայտերի գնահատման արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն հանձնաժողովի կողմից 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որին 11.12.2019թ. armeps համակարգի միջոցով ծանուցվել էր ներկայացնելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որը սակայն օրենքով սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ն չներկայացվեց և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 18.12.2019թ. ծանուցմաբ պահանջվեց ներկայացնել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները.

-«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1) 2-րդ չափսբաժնով նախատեսված «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ հաբեր» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերի տեխնիկական

բնութագրով պահանջվեի էր, որ նշված ապրանքատեսակը պետք է ունենա «Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%», որի վերաբերյալ դրույթը բացակայում էր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

9-րդ չափարաժին՝ «Դիքլորիզոցիանաթթվի նատրիումական աղ պարունակող ախտահանիչ գրանուլաներ» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել էր փաթեթավորումը՝ գործարանային տուփ և պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 50%, որի վերաբերյալ դրույթը բացակայում էր «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

Հանձնաժողովը, հիմքը ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Սույն գործի փաստերի, մասնավորապես «Խաչպար» ՍՊԸ-ի համակարգչային ցանցը սպասարկող «Նորայր Մարտիրոսյան» Ա/Ձ-ի կողմից կազմված արձանագրության հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Խաչպւսր» ՍՊԸ-ի գրասենյակում տեղակայված համակարգչային ցանցում հայտնաբերված խաթարումների պատճառով «Խուսչպար» ՍՊԸ-ն չի ստացել Հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.12.2019թ.-ին armeps.am համակարգի էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի khachpar.llc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված թիվ 3.1 ներկայացնելու մասին ծանուցումը:

01.11.2019թ.-ին «Խաչպւսր» ՍՊԸ-ի և «Նորայր Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Նորայր Մարտիրոսյան» Ա/Ձ-ն պարտավորվում է ապահովել «Խաչպւսր» ՍՊԸ-ի համակարգիչների և համակարգչային ցանցի անխափան աշխատանքը, խնդիրներ առաջանալու դեպքում՝ «Խաչպւսր» ՍՊԸ-ի կողմից տեղեկացվելուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում վերականգնել համակարգի բնականոն աշխատանքը:

Վերոգրյալների հիմքով, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ տեխնիկական խնդիրների պատճառով զրկված լինելով ծանուցում ստանալու

հնարավորությունից, Մասնակիցը օբյեկտիվորեն զրկվել է շտկում ներկայացնելու հնարավորությունից, ինչպես և արձանագրվել է Հանձնաժողովի 14.01.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ՝ քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված շտկելու հնարավորությունից արդեն իսկ օգտվել էր (սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթեր չէր ներկայացրել և նրան որպես շտկում հնարավորություն էր տրվել ներկայացնելու այդ փաստաթղթերը), իսկ օրենսդրությամբ կրկնակի շտկում կատարելու հնարավորություն նախատեսված չէ:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Մասնակցի գործողություններում (անգործությամբ) առկա չէ դիտավորություն՝ ուղղված գնման գործընթացին ստանձնած պարտավորություն խախտմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակիցը զրկված է եղել 11.12.2019թ.-ին ծանուցումը ստանալու հնարավորությունից, որիպիսի պայմաններում վերջինիս մոտ կծագեր Կարգով սահմանված արձանագրված անհամապատասխանությունների շտկման իրավունքը, որից և ելնելով կկարողանար ներկայացնել կամ չներկայացնել հավելված թիվ 3.1-ի շտկված տարբերակը:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/760-2020 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/38 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**